

ւատք, և չե կամենալ ոչ որին ընդ քարշ
ածել բոնութեամբ և ստիպմամբ զեպ ի
իւր օրէնքը, որպէս զի չխանգարէ մարդ-
կային ազատութիւնը:

Ի հետեւումն միջնորդութեան Որդոյն
Սստուծոյ՝ մարդկային ազգի փրկութեան
համար իմաստումն խորհրդով Երից Սս-
տուածային Անձանց նախասահմանած էր
նոյն իսկ փրկութեան կարգը, զոր Պօղոս
առաքեալը անուանում է խնամարկու-
թիւն կամ անտեսութիւն աստուածային։
Եյս տնտեսութեան էութիւնը կրովան-
դակի յայնմ, որ մարդկային ազգը որպէս
հարկն է պատրաստուելն յետոյ ի փր-
կութիւն, ամենասուրբ Երրորդութեան
Երկրորդ անձն՝ որ էր Միածին Որդին Սս-
տուծոյ՝ Հօր Սստուծոյ կամքին համաձայն
սահմանուած ժամանակին պիտի իջնէր
երկնքից մեր փրկութեան համար, և մար-
մին պիտի առնուը Մարիամ սուրբ կու-
սէն Հոգովն սրբով, պիտի չարչարուէր
մեղ համար, մահուանը պիտի համբերէր
խաչին, երրորդ օրը յարութիւն պիտի առ-
նուը, երկնքը պիտի համբառնար և պի-
տի նստէր Հօր աջ կողմը։ Ոորանից յետոյ
Երրորդ անձը ամենասուրբ Երրորդու-
թեան՝ Հոգին սուրբ ի փոխարէն Որդոյն
Սստուծոյ արժանեաց պիտի իջնէր Հօր Սս-
տուծոյ կողմից և անբաժան մնալով հա-
ւատացեալնէրի մէջ շնորհաց զօրութեամբ
պիտի յատկացնէր մարդոց փրկական սուրբ
խորհուրդը, որը կատարուած էր Սս-
տուածորդուոյ ձեռքովը։ Իսկ երկրիս վերայ
այս փրկութեան շնորհաց անկորուստ պահ-
պանութեան և անընդհատ շարունակու-
թեան համար հաւատացեալնէրն Փրկին,
այն է՝ յորպէս Սստուծոյ, որոնք նորա ար-

ժանիքը իրենց սեպհականացրած էին սուրբ
Հոգով շնորհիւը՝ պարտաւոր էին կազմել
ժողով հաւատացելոց, այս ինքն եկեղեցի
կամ շնորհաբաշխ արքայութիւն, որպէս
զի շահատակուելով ամենի փրկութեան
գործքին մէջ միաբանական զօրութեամբ
կատարեն յաջողութեամբ իրենց կենաց
ընթացքը և արժանանան յաւիտենական
կենաց։

ՅԵՐԵՒԱՆԵԱԾ

ԳԵՐՈՐԴ ՎԱՐԴԴԱՊԵՏ

ԱԲԱՄԵԼՔԵՐԵԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՐԵԳԱԿԻ.

Վրեգակն է զլխաւոր աղբիւրը ջերմու-
թեան և լուսոյ, որ ապքացնում է և լու-
սաւորում երկիրը, բոլոր միւս աղբիւրնե-
րը, ինչպէս են աստղերը, զիաաւոր աստ-
ղերը, մծորակները, լուսինը, նոյնպէս և
երկրային հրաշէկ մարմինները, վասուած
փայտերը, քարածուիրը, ճրագների և մո-
մերի բոցը ևլն, անում են համեմատա-
բար շատ աննշան ազգեցութիւն։ Առանց
արեգակի ջերմութեան անկարելի կիբուկի
զործարանաւոր մարմինների կեանքը երկրի
վերայ, ինչպէս կենդանիների, նոյնպէս և
բոյսերի։

Տաքացնելով մթնոլորտը զանազան
մասներում զանազան աստիճաննաւ, ա-
րեգակը ստիպում է օղին տեղափո-
խուիլ և այլպիտով յառաջնել քա-
մի. ջուրը շոգի է փոխարկում, որից յե-
տոյ զյանում են ամսպեր, անձրեւ, ձիւն,

ցող և ինչ որոնց քամին ամեն կողմ՝ և քշում և ջրում երկիրը, բաց ի զորանից՝ փորձերը ցոյց են տուել որ զործարանաւոր կեանքի կատարեալ զարգացման համար՝ անհրաժեշտ հարկաւոր են օդը, խոնաւութիւնը և ջերմութիւնը, հարկաւոր են նոյնպէս նոյն խոկ արեգակի ճառագայթները՝ որոնք յառաջանում են մի խորհրդաւոր անընդունելի ներգործութիւն, որ մինչև այժմ դիտութիւնը չէ կարողացել պարզաբանել, մէկ խօսքով զործարանաւոր կեանքի միակ աղքեւրն է արեգակը: Աորա կենդանացուցիչ ազգեցութեան ներքոյ բուսանում՝ են բոյսերը և աճում՝ անթիւ բազմութիւնը տառին կարզի կենդանաց՝ նորա և սոքա կերակուր են զառնում և պահպանում են աւելի կատարեալ կարմութեամբ կենդանիների զցութիւնը:

Երեզակի ճառագայթների ներգործութեամբ Ովկիանոսի և զետերի մակերևոյթից ջուրը անտեսանելի շոգիանման դրութիւն է փոխարկվում, և այդ միջոցին կրծքանում է ջերմութեան ահազին քանակութիւն, ուրեմն և արեգակի ջերմութեան միայն մի մասը զորձ է զրվում ջուրը տաքացնելու, խոկ միւս մասը զործ է դրվում: Ջուրը շոգի փոխարկուելիս, այս վերջն ջերմութիւնը թեև մնում է շոգոյ մէջ, բայց նրան չի ջերմացնում՝ ինչպէս կարելի էր մակարերել, և առհասարակ իւրեան չի յայտնում, զորա համար և ասվում է Շառշէտալ ջլրմութիւն:

Շոգիների կազմութեան ժամանակ յայտնի ջերմութեան փոխակերպութիւնը ծածկեալ՝ արգելում է ջրի տաքանալը, զորանից է որ տարուայ ջերմ եղանակում

և օրուայ ջերմ ժամերում՝ ծովի վերայ տւելի հով է լինում՝ քան ցամաքի հողի վերայ, երբ որ շոգիները անտեսանելի զրութիւնից գառնում են տեսանելի, կազմելով ամպեր, անձրե, ձիւն, և ին այն ժամանակ շոգիների ծածկեալ ջերմութիւնը ազատվում է և գառնում յայտնի, այդ պատճառով ձմեռը և առհասարակ ցուրտ ժամանակը, ծովագինեայ երկրներում աւելի առաք է լինում՝ քան թէ ահազին ցամաք հողի մէջ եղած տեղերում: Երեզակի ջերմութեան ներգործութեամբ կատարվում են շատ կենդանական և բուսական երեսիներ՝ այս տեղ էլ նոյնպէս ջերմութեան մի մասն կլանվում է բոյսերից և դառնում է ծածկեալ, այդ պատճառով էլ հողի այն տարածութիւնը՝ որ զուրկ է բուսականնութիւնից՝ տաքանում է աւելջ շատ քան այն մարզագետինները, որ ծածկուած են խիտ գալարիով և այն կողմերը ուր կան անտառներ: Երբ որ բոյսերը նեխուում են կամ այրվում, այն ժամանակ ծածկեալ ջերմութիւնը բաժնարիվում է: Մարմնոյ այրման ժամանակ բարեխառնութեան բարձրանալը նորանից է յառաջ զալիս՝ որ այրուող մարմնոյ ծածկեալ ջերմութիւնը յայտնի է դառնում, ապա ուրեմն և մեր վառարանների տաքութեան սկիզբն է արեզակը: Ըստ հին ժամանակներում երկրի բուսականնութիւնը անհամանատ հարուստ էր քան այժմ, բուսանում էին ահազին բոյսեր՝ օրոնք սեփական են միայն ջերմ երկիրներին: նոցանից շատ տեսակներ կորան, բայց և շատերը մինչև այժմ պատահում են Այրեցեալ Գօտում: Ժառներին և ուրիշ մանը բոյսերին տառնում էր ջուրը՝ որոնք յեաց ծածկվում

էին քարերով, աւազով և կառով, դոքա
ել ժամանակ անցնելուց յետոյ դարձել են
գարածութիւն կամ հանաւածութիւն կոչուած զիւ-
րավառ նիւթը: Էին բյուերի այս մնացորդ-
ները այրուելիս թողնում են այն ջերմու-
թիւնը որ նոքա միանգամ առել էին արե-
գակից: Այդ միևնոյն ջերմութիւնը՝ միշտ կը-
լանում են մեր աչքի առաջև բյուերը խւ-
րեանց մեծանալու, տերեների, ծաղիների
և պտուղների կազմուելու ժամանակ՝ և նո-
րից ազատվում է, նեխելիս կամ այրուելիս:
Բոյսերը իբրև կերակուր դորձածուելով
զանազան փոփոխութիւնների են նոմարկ-
վում կենդանւոյ կազմուածի մէջ և նորան
մունդ են աալիս, այս ինքն նորոգում են
նորա մարմինը, որ միշտ աւերվում է կեն-
դանական արաւաղբութիւնների ժամանակ.
Նոյն խակ կենդանիները ուրիշ կենդանիների
կերակուր զառնալիս կրում են միևնոյն փո-
փոխութիւնները: Այս և այն հանգամանք-
ներում և առհասարակ մննդառութեան
ժամանակ բաժանվում է մննդական նիւ-
թերի մէջ ծածկուած ջերմութիւնը. այս
ջերմութիւնը որքան որ հարկաւոր է կեն-
դանւոյ կեանքի համար, նոյնքան և մարմ-
նոյ նորոգման համար, որովհետեւ կենդանին
միշտ դուրս է թողնում ջերմութիւնը: Որ-
քան որ ցուրտ է մեզ շրջապատող օդը,
մենք այնքան աւելի ջերմութիւն ենք կո-
րուսանում, դորա համար մենք պիտք է
աւելի շատ ուտենք. դորանից է որ տաք
երկիրների բնակիները աւելի քիչ են ու-
տում. քան ցուրտ երկիրներներ. յետազան
պարզ ցոյց է տալիս որ կենդանիների ջեր-
մութեան սկիզբը է նոյնակես արեգակը:
Դորձարանաւոր կեանքը, օդի եւ ջրի շաբ-
ճումը, ջերմութիւնը, լոյսը ելքարակա-

նութիւնը բազմաթիւ և զանազան աղ-
րիւներ են երեսյթների, շատ և քիչ չա-
փով հարկաւոր և օգաւուետ մարդուն.
Ճշմարիտ է որ կան շատ երեսյթներ՝ որոնց
անմիջական զօրծողութիւնը անօգուտ և
մինչև անզամ վնասակար է և կորստարեր,
բայց և նոքա զիւտութեան և արհեստի
կառավարութեան ներքոյ երրեմն դառնում
են օգտակար և ձառայում են հեշտու-
թեանց բազմանալուն և կամ մարդկային
կեանքի գեղեցկանալուն:

Երկրի անսպառելի հարստութիւնները
և արեգակի կենդանացուցիչ ճառագայթ-
ները կարող եին այս մարդու կեանքը առ-
նել առատ և հաճոյ եթէ, մարդկը լինեին
խաղաղական և ունենային փոխաղարձ բար-
եցակամութիւն: Երեգակի մեծութեան,
նորա հեռաւորութեան և կազմութեան
մասին յայտնուած են շատ անհաւատալի
կարծիքներ. միայն նոր զիւտութիւնը առեց
մեզ մի քանի արժանահաւատ տեղեկու-
թիւններ. չունենալով հետարութիւն զլ-
նելու այդ առարկայի լիուլի և մանրամասն
բացատրութիւնը, մասսամբ նորա զժուա-
րութիւնից և մասամբ նորա համար որ
դա կրոներ շատ տեղ, բաւականանակ
միայն կարճառօտքացատրութեամբք, թէ և
շատ ցաւում ենք որ չունինք ուրիշ միջոց
հաւաստել մեր ընթերցողներին, որ հնա-
րաւոր է առարկային չմօտեցած իմանալ
նորա մեծութիւնը և հետարութիւնը
մեղանից՝ և եթէ, այդ առարկան լուսատու-
է ինչպէս արեգակը կամ աստղերը, այն
ժամանակ որոշել մինչև անզամ թէ, թիւ
նիւթերից է բազկացած և թէ, թ'նչպէս է
կազմուած այդ մարմինը:

Առվարական գործածական միջոցը չտփելու համար հեռաւորութիւնը մեկ տեղից մինչև միւսը՝ նորանում՝ է որ մի որեւիցե, չափ օրինակ սաժենը զետեղում՝ են այդ տարածութեան մ.ջ., քանի անդամ՝ որ սաժենը զետեղում՝ է՝ նոյնքան սաժեն պարունակում՝ է և չափելի տարածութիւնը:

Իսկ երկրաչափութիւնը միջոց է տալիս չափել այնպիսի տարածութիւններ՝ ոչը ոչ կարելի է ոտքով գնալ և ոչ ձիով անցանել. նա սովորեցնում՝ է մեզ թէ ինչպէս պէտք է որոշել մի սարի կամ աշտարակի բարձրութիւնը չբարձրանալով նոցա վերայ և մինչեւ անդամ՝ առանց մերձնալու նորանց: Այդպիսի հաշեւներ անում են նաև աստղաբաշխները չափելու այն տարածութիւնը որ բաժանում՝ է մեզ արեգակից և ուրիշ երկնային լուսատուններից: Այդ կերպով զանուած է որ արեգակը հեռու է մեզանից 144 միլիոն վերստ. այս թիւը այնքան մեծ է որ մենք չենք կարող մեզ պատկերացնել, ուստի աշխատենք ուրիշ միջոցաւ առանց թուերի պարզել արեգակի հեռաւորութիւնը մեզ զանից: Ճանապարհորդը որ կամենում էր երկար ժամանակ ճանապարհորդել. չեր կարող ամեն օր անցանել 40 վերստ, շատ քչերը միայն կարող էին համբերել և տանել մի քանի օրուայ ընթացքում՝ այդ սաստիկ աշխատութիւնը, բայց ասենք թէ, ճանապարհորդը անվաստակելի և թէ, նա ամեն օր գնում՝ է 40 վերստ ստանց հանդպատի, բայց այնու ամենայնիւ նորան պէտք էր 10,000 տարի մինչեւ արեգակը համելու համար, մարդու ամենաերկար կեանքը համեմատաբար այնքան կարծ է՝ որ չերելի մտածել և խելազարութիւն

ևս է կարծել թէ մեկ մարդ կարող էր կատարել այդ ճանապարհորդութիւնը, մինչև անգամ հարիւր սերունդ ապրելով ամեն մեկը 100 տարի անդադար հետեւելով մեկ մեկի ետևից այս երկար ճանապարհորդութիւնը չեմնել կարող համել արեգակին:

Փոխազրութեան միջոցներից ամենաարագն է երկաթուղին՝ որը որ ամեն մի ժամում՝ անցնում՝ է հազիւ 40 վերստ, այդ արագութեամբ եթէ լինել երկաթուղի Պետերբուրգից Տվիխու՝ մեքենան կանցնել այդ երկու քաղաքների մ.ջ եղած տարածութիւնը երեք օրում, իսկ Պետերբուրգից Կակուտսկ 12 օրում, իսկ հեռաւորութիւնը մեք երկեց մինչեւ արեգակը մեքենան կվազէր 300 տարում. եթէ թնդանօթից ձգած ոմրի արագութիւնը ընդունիք վայրկեանում մեկ վերստ, այն ժամանակ երկեց ձգած ոումը՝ կարծելով թէ նրա արագութիւնը չեր պակասիւ՝ կհամել արեգակին $\frac{4}{2}$ տարում:

Լուսոյ ճառագայթները մեկ վայրկեանում վազում են 280,000 վերստ, օրինակ եթէ մեզանից 280,000 վերստ հեռու յանկարծ երեւեր մի նոր լուսատու տատղ, մենք կտեսնենք նորան մեկ վայրկեանի մ.ջ եթէ նա կրկն անհետանար, զարձեալ մենք կիմանայինք մեկ վայրկեան յետոյ. ըստայելով լուսոյ այդ սաստիկ արագութեանը՝ արեգակի լոյսը մեզ համում է 8 ըոպէտում. ուրիշ կերպ ասենք, եթէ արեգակը յանկարծ խաւարեր, մենք իսկոյն չենք իմանալ՝ այլ 8 ըոպէ յետոյ. և եթէ կրկն լուսաւորուեր, մենք կտեսնենք 8 ըոպէ յետոյ. մակերեւութական նկատողութեան ժամանակ արեգակի հեռաւորութիւնը բերում է մեզ հետեւեալ սիսալ եղագացու-

թեանց, թէ նա հարթ է և մի ափակի չափ մեծութիւն ունի. բայց խսկականը այդ լուսատուն գնտաձեւ է, և բաց ի զորանից՝ այդ գունավոր ունի անսովոր մեծութիւն:

Ոքան որ մի առարկայ մեզանից աւելի է հեռանում, այնքան նա մեզ փոքր է երեսում և վերջապէս մեր տեսութեանը աննկատելի է դառնում. բարձր լեաը՝ որ տեսնը վում է հեռուանց, երեսում է մեզ մի բլրի չափ, իսկ զանգակատան խաչը ներքեցից նայելս շատ փոքր է երեսում՝ մինչդեռ նա շատ մեծ է երեցածից. այդ մինչդեռն է լինում և արեգակի վերաբերութեամբ, նա մեզ փոքր է երեսում իւր հեռաւորութեան պատճառով. նորա խսկական մեծութիւնը պէտք է շատ շատ ահազին լինի, ապա թէ ոչ նա ոչ միայն չը երեալ մեզ փայլուն շրջանի ձեռով, այլ բոլորովին անտեսանելի կլինէր. աստղաբաշխների հետաքննութիւնքը ցոյց են տալիս որ արեգակի տրամադրին է մօտաւորապէս **1,300,000** վերստ. ոչ մի երեակայութիւն չէ կարող պատկերացնել իւրեան այդ ահազին մեծութիւնը, և նրան կարելի է հասկանալ միայն համեմատելով ուրիշ մեծութեանց հետ. երկրագնափ տըրամագիծը ունի **6000** վերստ երկայնութիւն և այդ չափը այնքան մեծ է՝ որ մենք չենք կարող պատկերացնել մեզ. վեր առնենք աւելի փոքր մեծութիւն. օրինակ, երկրագնափ ամենաբարձր դիրքը ունի **8** վերստ բարձրութիւն. այնու ամենայնիւ այդ ահազին հողակոյաը է մի շատ աննշան մեծութիւն երկրի համեմատութեամբ. եթէ երկրի փոխանակ պատկերացնենք մեզ մի գունդ մարդու հասակի չափ՝ այն ժամանակ հառերիզանկարը ձեւացնելու համար մենք

պէտք է զննենք զնափ վերայ մի մեկոնի հատիկ. չնայելով իւր ահազին մեծութեանը՝ որը որ կարելի է հասկանալ համեմատութեամբ, երկիրն էլ է մի շատ աննշան մեծութիւն արեգակի համեմատութեամբ. այդ յուսատուի կիսատրամազիծը երկու անդամ աւելի է լուսնոյ հեռաւորութիւնից մեզանից: Աթէ արեգակի կենդրով բռնելը այն տեղը՝ որտեղ այժմ բռնում է մեր երկիրը, այն ժամանակ երկրագունար կիորսուելը արեգակի ահազին կոյտում, որը որ լուսնից շատ հեռու կտարածուեր. արեգակի բռնած սարածութիւնը լցնելու համար, հարկաւոր են մեր երկրին հաւասար **1,400,000** գնտեր:

Երկնային տարածութեան մէջ ցըիւընկած են մեր արեգակի նման անթիւ լուսաւոր մարմիններ, աստղաբաշխութիւնը սովորեցնում է մեզ՝ որ ամեն մի աստղը որքան էլ փոքր երեւը մեզ և նոյնպէս մի արեգակ, այս անհամար արեգակները, որոնց աննշան մասը միայն նկատելի է մեր տեսութեանը, զանգում են այնպիսի հեռաւոր տարածութեան մէջ, որ նոցանից ամենամօտիկից լցուը հասնում է մեզ **4** տարում: Իսկ մնացած աստղերի լցուը, մինչեւ անգամ ոչ ամենահեռաներինը, հասնում է մեզ **100** տարում. մասածելով որ արեգակի լցուը **8** լուսերում վազում է այն տարածութիւնը՝ որ բաժանում է մեզ նորանից, մենք կարող ենք կազմել մասնաւոր հասկացողութիւն այն ահազին տարածութեան վերայ, որ բաժանում է մեզ երկնային միւս լուսատուներից:

Մեր աեղեկութիւնները արեգակի մեծութեան և հեռաւորութեան մասին բաւականին ծիցդ են թէե ոչ բոլորովին կա-

տարեալ և հաստատ, բայց նորա կազմութեան և նիւթերի բնութեան վերաբերութեամբ մեր զիտութիւնը շատ սահմանափակ է, այս աեղեկութիւնները ստացուած են երկրի հրաշեկ մարմինների թողած լուսոյ նկատողութեամբ արած փորձերից. Փորձը խկապէս ցոյց է, առաջ թէ, լոյսը որ զուրս է գալիս լուսոյ զանազան աղբիւրներից՝ ունի մի քանի յատկութիւններ, որոնց նկարագրել անակեղի էր. այդ փորձերից զանուած են հետեւալ արժանահաւատ եղակացութիւնքը։ Երեզակը ունի ջերմութեան անսովոր բարձր աստիճան, և զորա համար նորան կազմող նիւթերը զանվում են շողիանման կամ դաշնակերպ դրութենում, նորա մակերեսոյթի վերայի շողիները դիսելով երկնային սառը տարածութեանը՝ փոխվում են հեղուկ և հաստատուն զրութեանց. կազմվում են շատ մանր, հեղուկ և հաստատուն մասնիկներ՝ որոնք լցնում են արեզակի մակերեսութական կարդը, որ կազմուած է զաղերից և շողիներից. այս մանր մասների բաժանուած և հրաշեկ փոշին իւր ծանրութեան պատճառով իջնում՝ է արեզակի մէջը, միեւնոյն ժամանակ իջնում՝ են և սառած զաղերը. այդ կերպով արեզակի զաղակերպ մասը զանվում է անզազար շարժողութեան մէջ. տաքացած զաղերը բարձրանում են արեզակի ծոցերից, հասնելով նորա մակերեսութին և բաւականին պնդութիւն են սառնում՝ և այնուհետեւ կազմուած փոշոյ հետ ցած են իջնում, իսկ նոցա փոխանակ բարձրանում են նոր չաքացած զաղեր, կարմրացած փայլուն փոշին՝ որ բանում է, արեզակի վերին կարշ ամեն կողմ՝ է ցրվում լուսոյ և ջեր-

մութեան ձառաղայթները և զորանով է սկիզբն տալիս երկրի գործարանաւոր կեանքին, թէ, և արեզակի ամենօրուայ թողած ջերմութեան քանակութիւնը շատ մեծ է, բայց մտարերելով նորա մեծութիւնը և առանձին կազմութիւնը՝ կարելի է հասկանալ թէ, ինչու համար մինչև այժմ չենկատած որ նորա ջերմութեան աստիճանը ցածրանար. թէ, որ ինչպէս մի քանիսը կարծում են, արեզակը պինդ մորմին լիներ, այն ժամանակ շուտով կնուազերնուար մակերեսոյթը և կզազարեր լուսաւորելուց՝ թէ, և իւր մէջ կազահէր ջերմութեան բարձր աստիճան. նորա զաղակերպ դրութեան մէջ զանուելով՝ այդ բանը անկարելի է, որովհետեւ մակերեսոյթի վերայ սառած զաղերը խորն են ընկնում և նոցատեղ բանում են նոր տաքացած զաղեր. այդ կերպով արեզակը իւր բոլոր տարածութեամբ հաւասարաշատի է սառչում. և եթէ չեն նկատվում նորա ջերմութեան ցածրանար՝ այդ բանը յառաջնում է նորա ահազին մեծութիւնից. հեղուկները այնքան յարմարաշարժ չեն՝ որքան զաղերը, զորա համար էլ եթէ, արեզակը հեղուկ լիներ՝ այն ժամանակը նորա մակերեսոյթը շուտով կախանանար, կկազմուեր մի հաստ կեղեւ՝ որ շուտով կմթնանար թէ, և արեզակը իւր միջումը կունենար մի բոցավառ զանցուած։ Երեզակի ջերմութիւնը չափել ի հարկէ անկարելի է, բայց նորա փոփոխութեան վերայ մենք կարող ենք զատել մեր երկրի ջերմութեամբ, որովհետեւ երկրագնատի ջերմութեան միակ աղբիւրն է արեզակը. արեզակի ջերմութեան աստիճանի պահասումը, կյառաջացներ և ջերմութեան պակասութիւն մեր երկրի վե-

բայ և կիմաների, զործարանաւոր կեամբի և սրիշ երեղիմների փոփոխութիւն. այդ բանը պատմական ժամանակի ընթացքում ամենեն չէ նկատուած, ահա ինչից են եղբակացնում թէ չնայելով արեգակի թռչուած մշտական ջերմութեանը, նա չէ սառչում, մինչ երբ այդ ջերմութեան քանակութիւնը շատ մեծ է, ուսումնականների ուշադիր քննութիւնները ցոյց են տռել որ արեգակի ամեն մի քառակուսի ուսնաշափը՝ թռղնում է մօտաւորապէս եօթն անդամ՝ աւելի ջերմութիւն քան ածխի հաւասար քանակութիւնը զարքնի ամենասաստիկ վառուած վառարանում. Եթէ արեգակը ամեն կողմից ծածկուեր ասացի մի թերթով 18 վերստ հաստութեամբ, այդ սառցեայ թաղանթը հայելու համար բաւական էր նորա մի օրում թռղած ջերմութիւնը. իսկ երկիրը իւր մեծութեան աննշանութեամբ, որ կորսվում է տիեզերքի անսահման տարածութեան մ.ջ, ըստանում է միայն ամենաքիչ մաս արեգակի ջերմութիւնից, որի տարեկան դումարը կարող էր հալել սասացի մի թերթ՝ որ ծածկել էր երկիրը ամեն կողմից 100 ոսնաշափ հաստութեամբ:

Երկրի մակերևոյթի համար արեգակի ջերմութեան նշանակութիւնը մենք կատարելապէս չենք հասկանալ եթէ չնկատեինք մթնոլորտի ազդեցութիւնը, որի մասին և այժմ խօսինք. արեգակի թռղած ճառագայթներից՝ որոնք լուսոյ և ջերմութեան աղբիւներ են, զանազանում են երկուսը այս ինքն լուսաւոր և խաւար ճառագայթներ. առաջնները ներգործում են աչքի վերայ, և յառաջացնում են զեռուցումն, այդպէս են արեգակի, վառուած

ածուխների և հրաշէկ մետաղների ճառագայթները երկրորդ տեսակի ճառագայթները աչքին չեն ներգործում և դորա համար անտեսանելի են, բայց տաքայնելու յատկութիւն ունին՝ ինչպէս տաքացրած ջրի ամանը՝ աաքացրած մետաղական կասկարան՝ կարող են տաքացնել այն մարտինները որոնք նոցանից մի որեւիցէ տաքածութեամբ հեռու են զանգում. այս առարկաները չեն լուսաւորում՝ այլ միայն ներգործում. են իւրեանց խաւար ճառագայթներով. արեգակը և ուրիշ մարմինները՝ որոնք տաքացրած են մինչև աստիճան՝ որ կարող են լուսաւորել, չեն արարձակում միայն լուսաւոր ճառագայթներ, այլ և խաւար. լուսաւոր ճառագայթներին երբեմն ասում են լուսաւոր ջերմութիւն, իսկ խաւարներին՝ խաւար ջերմութիւն. ընդունում են այն թէ՝ որքան ել բոլոր առարկաները՝ սառը կամ ջերմացրած լինին, աեսնում են ջերմածին ճառագայթներ, բայց այնքան նուազ քանակութեամբ՝ որքան որ նոցա ջերմութեան աստիճանը ցածր է. այդ պատճառով ել կարելի է այսպէս ասել թէ՝ լուսաւոր մարմինները նորանով են զանազանում խաւար մարտիններից, որ բացի խաւար ջերմութիւնից թռղնում են և լուսաւոր ջերմութիւն:

Օվը յարմարաթափանցիկ է լուսաւոր ջերմութեանը, այս ինքն փոխանակ նորան պահելու և ինքը տաքանալու՝ նա իւր միջեց թռղնում է բոլորովին ազատ. բայց խաւար ջերմութեան համար օվը ընդհակառակը շատ թափանցիկ չէ՝ այս ինքն արգելում է խաւար ճառագայթների տաքածումը, պահելով նոցա վառարանի անթափանցիկ վանդակի նման. ապա-

կիմն էլ օդի նման թափանցիկ է լուսաւոր ջերմութիւնը և անթափանցիկ խաւար ջերմութիւնը՝ նոտեղով այնպիսի պատուհանի մօտ՝ որի ապակիներին զարկում են արեգակի ճառագայթները, մենք կզգանք նոյնպիսի ջերմութեան զզացողութիւն՝ որպես թէ զբուժմբ նոյն խոկ արեգակի ուղղակի ազդեցութեան տակ լինենք. ճշմարիտ է որ ապակին պահում է խաւար ջերմութիւնը՝ բայց նորա քանակութիւնը շատքիչ է համեմատելով լուսաւոր ջերմութեան հետ, մօտեցնելով մեր երեսը եռացրած ջրով լի ամանին՝ մենք կզգանք տաքութիւն, բայց եթէ այդ ամանը ծածկենք մի ապակեայ թերթով և երեսներս կրկին մօտեցնենք ամանին, մենք ամենեն չենք դդալ տաքութիւն. ապակու այդ յատկութիւնը՝ որ թողնում է լուսաւոր ջերմութիւնը և պահում է, խաւարը, հաստատվում է, և հետեւալ փորձով : Աեւ կայացնենք մել մի մեծ փայտայ արկղի մեջը սե ներկած և որի մի կողմի փոխանակ լիներ երեք հատ ապակիներ դասաւորուած անհուն տարածութեամբ մէկ մէկից՝ չհռու. արկղիկի այդ ապակեայ կողմը դարձուցանելով դիպի արեգակը, մի քանի ժամանակ անցնելուց յետոյ, մենք կլնեկատենք ջերմութեան սաստիկ բարձրանալի այդ արկղիկի մեջ, որ կարող էր համել ջրի եռացման սատիճանին՝ այնպէս որ այդ բնական վառարանում կարելի էր առանց վառելքի ճաշ պատրաստել. արկղիկի մեջ ջերմութեան այդ սատիճանի բարձրանալը կախուած է ապակեայ թերթերից որ դըրուած են մէկ մէկի մօտ՝ արեգակի լուսաւոր ջերմութիւնը անցնում է, նոցանից առանց ամենալիորը դժուարութեան և կը

լանվում է արկղիկի սե պատերից, խոկ սե պատերը արձակում են ջերմածին բայց խաւար ճառագայթներ, որոնք դուրս չեն թողվում ապակուց, այլ մասամբ պահում են և մասամբ արկղիկի եակի կողմն են անդրադառնում, ապա ուրեմն դուրս չեն գնում. ջերմութեան քանակութիւնը ուելանում է, արկղիկի մեջ և պահում. մայտեայ ապակու ջերմութեան վատ հազարդող լինելու պատճառով՝ արեգակի ջերմութիւնը այդ կերպով հաւաքուելով, արկղիկի և նորա մեջ զբուած առարկայի ջերմութիւնը կարող է հասուցանել շատ բարձր աստիճանի. օդը բոլորին ազատ թողնելով իւր միջից լուսաւոր ջերմութիւնը՝ իսքը համարեալ չ տաքանում. բայց եթէ միջնորդար պահէր արեգակի բոլոր ճառագայթները, այն ժամանակ ոչ թէ երկիրը, այլ օդի վերին մասերը միայն կօգաուեին նոցանից՝ և քանի վեր բարձրանայիր՝ այնքան տաք կլինելը. բայց միշտ դիտած է դորա հակառակը. անհամար նկատութիւնները ցոյց են տուել որ քանի հեռու լինի երկրի մակերեսութից՝ այնքան սառն են օդի մասերը՝ այս բանը պարզ ցոյց է տալիս որ միջնորդար չէ պահում արեգակի լուսաւոր ջերմութիւնը և սառն է մնում. օդի այդ յատկութեամբը արեգակի ճառագայթները առանց թուլանալու թափանցում են միջնորդարի հաստութեանը և հասում են մեզ ըերելով իւրեանց ջերմութեան մեծ մասը, որ այնքան հարկաւոր է երկրադնախ էութեան կեանքի համար. բայց բաց ի այդ յատկութիւնից՝ օդը ունի և մի ուրիշ ոչ պակաս նշանաւոր յատկութիւն, զանազան փորձերը ցոյց են տուել որ օդը շատ սաստիկ

պահում է խաւար ջերմութիւնը, ողի այդ հրաշալի յատկութեամբն է որ արեգակի լուսաւոր ջերմութեամբ տաքացած երկրի մակերեսոյթի խաւար ճառագայթները չեն ցրւում մեզ շրջապատող երկնային տարածութեանց մէջ։ բայց եթէ ընդհակառակը այդպէս ցիներ, գիշերները երկրի մակերեսոյթը այն աստիճանի կառուէր՝ որ ոչ մի էակ չեր կարող տանել ջերմութեան սաստիկ փոփոխութեանը, ասել է թէ օղը արեգակից տաքացած երկրային առարկաների թողած խաւար ջերմութեան վերաբերութեամբ՝ կունենար լուսաւոր ջերմութեան վերաբերութեամբ ունեցած յատկութեանց հակառակը։ այս բանի վերաբերութեամբ միժնոլորտը կարեկի է անուանել երկրի հագուստ, որովհետեւ հաղուստի նման որ արգելում է ջերմութեան կորուստը մեր մարմնից, պահում է երկիրը չափազանց սառելուց։

Օրովհետեւ արեգակը լուսաւոր ջերմութեան հետ ուղարկում է մինչեւ խաւար ջերմութիւն, դորա համար արեգակի բոլոր ճառագայթները միժնոլորտը թափանցելով չեն համում մեզ, այս ինքն լուսաւոր ճառագայթները համում են առանց թուլանալու, իսկ խաւար ճառագայթները մեծ մասամբ պահվում են։ Ասել է թէ օղը պէտք է ուղղակի արեգակից տաքանայ, բայց շատ թոյլ, որովհետեւ արեգակը արձակում է աւելի շատ ջերմածին անխաւար ճառագայթներ։

Ուէկ գիշերները երկրի սառիլը արգելում է միժնոլորտը՝ բայց ոչ բոլորովին, որովհետեւ նա բաւականին արգելիչ է խաւար ջերմութեանը։ այս վերջին հանգամանքը, ինչպէս որ մենք հիմայ կտևնենք,

շատ հարկաւոր է, որովհետեւ եթէ ուրիշ պայմաններ լինեին, այս ինքն եթէ, միժնոլորտը հեշտ թաղնելով իւրեանից արեգակի լուսաւոր ջերմութիւնը՝ բոլորովին անթափանցելի լիներ խաւար ջերմութեանը, այն ժամանակ թէ կ զիշերները չեր պատահէլ երկրի սաստիկ սառումն և խիստ ձրմեռ, բայց դորա փոխանակ կիներ ուրիշ անյարմարութիւն։ երկրի մակերեսոյթին արեգակի ամեն օր ուղարկած ջերմութիւնը կհաւաքուեր մինչեւ այն աստիճան, որ երկիրը շուտապվ մի հեղձուցիչ վառարան կդառնար, որի ջերմութեան աստիճանը քիչ քիչ մեծանալով անկարելի կդարձուցաներ կեանքը երկրի մակերեսոյթի վերայ։

Եյսպէսով միժնոլորտը թողնելով իւրեանից լուսաւոր ջերմ՝ ճառագայթներ, թողնում է նոցաներգործել երկրի վերայ և պահելով երկրի մակերեսոյթի թողած մեծ մասը՝ բայց ոչ բոլորը, ջերմութիւնը այն չափով է պահում՝ որքան հարկաւոր է զործարանաւոր մարմինների կեանքի համար։

Եթէ միժնոլորտը կլաներ խաւար ճառագայթների փոքր քանակութիւնն քան այժմ, այն ժամանակ օղի ջերմութեան աստիճանը կրաքձրանար և մշտական կրցանար, այս և այն պայմաններում մի քանիսը և կամ բոլոր զոյութիւնն ունեցող մարմինները կոչնչանային, թէ և չէ կարելի մերժել և այն՝ որ զուցէ ուրիշները կզոյանային։

Երկրի ջերմութեան աստիճանի վերաբերութեամբ միժնոլորտի խաղացած գերը աւելի պարզ հասկանալու համար նկատմանք ինչ է լինում ջերմանոցներում՝ որ-

տեղ ձմեռը ծաղկում են տաք կողմերի ծաղիկները, և որ անկուած են օդախ կամ բուսականութեան համար. ջերմանոցին կարելի է նմանեցնել փայտեայ արկղեկը, ուրի մասին մենք վերը իրակեցանք, այս շենուածքի հարաւային ճակատը լինում է ապակուց. և այս ապակեայ շրջանակից ներս են թափանցում լոյսը և ջերմութիւնը՝ որ այնքան կարեոր են բոյսերի ծաղիկներն:

Սպակին պահելով խաւար ժառադայթները թողնում է արեղակի լուսաւոր ջերմութիւնը և որովհետեւ ջերմանոցից կարող է դուրս գալ միայն խաւար ջերմութիւնը, դորա համար ապակիներից արգելուած փոքր առ փոքր հաւաքվում է և ջերմանոցի ջերմութեան աստիճանը դառնում է չափազանց բարձր արտաքին օդի ջերմութիւնից: Աթէ մի կարդ ապակու փոխանակ զրուի երկու, այն ժամանակ ջերմանոցի ջերմութեան աստիճանը աւելի շատ կրաքանայ, որովհետեւ խաւար ջերմութեանը ևս աւելի դժուար կլինի դուրս դալ. բայց շատացնելով ապակիների կարգը՝ ջերմանոցի ջերմութիւնը կարելի է հասուցանել չորացուցիչ վառարանի և կամ փայտեայ արկղեկի աստիճանին. բայց այդ ժամանակ բոլոր բոյսերը կոնչանային. այդպէս էլ կպատահէր և երկրի բոյսերին և կենդանիներին եթէ օդը բոլորովին չժողոնէր խաւար ջերմութիւնը իւրեանից:

Եյս բոլոր ասածներից գժուար չէ իշմանալ՝ թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի օդը երկրի գյութեանց վերաբերութեամբ, և թէ արեղակի բարերարներ գործութիւնը նոցա համար կախուած է օդի երկու յատկութիւններից՝ այս ինքն թողնել իւրեանից բոլորովին աղատ լուսաւոր ջերմու-

թիւնը, և պահել բաւականաշափ խաւար ջերմութիւնը:

Թ. առ հանուն նշանակութիւններ.

Ա. աւելացնելու համար:

ԲԱՐՅԱԿԱՆ

Ա. Պ. Գ. Ա. Յ. Ն.

Ժամանակիները երեք են և նոցանից ամեն մեկը կարծես նշանակուած է մարդկաւ յին բնութեան մի որեկիցէ սկզբունքի համար, այս ինքն ապատնին այն խելքի համար՝ որ աշխատում է թափանցել նորամէջ, ներկան՝ մի որեկիցէ ֆիզիքական ըգգայման համար, իսկ անցեալը՝ սրտի համար:

Խատարելութիւնը բառի բուն և խկական նշանակութեամբ անհասանելի է, մարդունց բայց մենք պէտք է զիմենք զէպ ի նա, և Ախխախնամութիւնը նորա համար մեզ անհասանելի նպատակ է տուել, որ մենք մեր բոլոր կեանքում յառաջ զիմենք:

Ի՞նչ բանում մենք աւելի սիրում ենք մեր բարեկամներին:

Եշխարհի մէջ մարդուն այնպէս են ընդունում, ինչպէս որ նա իւրեան ցոյց է տալիս. միայն հարկաւոր է միշտ իւրեան մի կերպով ցոյց տալ. ձանձրութեանը աւելի են համբերում քան ունայնութեանը:

Ուրիշների նախապատռութեանց դէմ չկայ ոչ մի աղատուելու հնարք քան սէրը:

Կռհասարակ մարդկանցը առաւել վըտանգաւոր են համարում քան ինչ որ են. յիմարները և խոհեմները հաւասար ան-